Հովհաննես Թումանյան

Երկար, երկար ման եկա...

Երկար, երկար ման եկա
Ոտքով, մըտքով ես կյանքում,
Երկու, երկու բան գըտա
Չար ու դըժվար էս կյանքում:

Վաղո՜ւց, վաղուց կար ասված,
Բայց կյանք տըվի ես բառին.
Դարձավ, դարձավ ինձ աստված՝
Գեղեցիկը ու բարին:

Դըստրիկ, դըստրիկ իմ անգին,

Դու գեղեցիկ ու բարի,
Աշխույժն, աշխույժն իմ կյանքի
Եվ իմ վըշտոտ քընարի:

Նայի՛ր, նայի՛ր սըրտաբաց
Էս լեն արձակ աշխարհին

Առատ, առատ տարածված
Գեղեցիկը ու բարին:

Էսքա՛ն, էսքա՛ն մոտ ու շատ
Բախտը փրոված մեր կյանքում,
Մարդը, մարդը՝ միշտ անբախտ՝

Որոնում է երկնքում;

1917